Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 մարտի 2014 թվականի N 261-Ա

ք. Երևան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի մարտի 21-ի N 01/16/1301-14 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը *որոշում է* .

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի՝

1) զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի և գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 67-2.2-50, 67-3.1-15) անձնագրերը հաստատելուն:

2) ղեկավարի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 67-1.2-1) անձնագրի՝

ա. 11-րդ կետից <<թ>>, <<ժ>>, <<ժա>>, <<ժբ>>, <<ժգ>>, <<ժդ>>, <<ժե>>, <<ժզ>>, <<ժէ>>, <<ժը>> ենթակետերը հանելուն,

բ. 11-րդ կետը <<ը>> ենթակետից հետո հետևյալ բովանդակությամբ նոր <<ը1>> ենթակետով լրացնելուն.

<<ը1) համակարգում է Մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքները.>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Մ. ԲԱԴԱԼՅԱՆ